ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան _27_ օգոստոսի 2025թ.

2025թ-ի օգոստոս 27-ին (2025թ-ին օգոստոս 12-ին/հայտերի բացում/ մինչև օգոստոսի 27-ը/հայտերի գնահատում/)՝ ժամը 15:00-ին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 25/38** ծածկագրով (CCI ընկերության կողմից արտադրված 10MAN10AA901 HP Dump PCV փականի նորոգման պահեստամասերի ձեռքբերման) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման և գինահատման նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դ. Մադոյան	Նախագահ (ԳՊ/ԳԱՊ) «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ.
Գ. Բուդումյան	Գնահատող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետի պարտականությունները կատարող
Ա. Փիլոյան	Բացող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետի տեղակալ
Ա. Զաքարյան	Բացող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի իրավաբանական և պայմանագրային բաժնի պետ

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Մադոյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա. Պետրոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիներիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Ընտրված մասնակցին մասին:
3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

1. ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիների կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գնի մասին

Հանձնաժողովի նախագահ Դ. Մադոյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվելիք ապրանքի գնումների պկանով հաստատված նախահաշվային գինը:

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	CCI ընկերության կողմից արտադրված 10MAN10AA901 HP Dump PCV փականի նորոգման պահեստամասեր	49 860 000

ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետը www.eauction.armeps.am կայքում 2025թ-ի օգոստոսի 11-ին 14:00-ն էր, հակադարձ աճուրդը օգոստոսի 12-ին 14:00-ն էր :

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հրավերում 2025 թ-ի հուլիսի 31-ին, հրապարակման օրը կատարվել է հրավերի փոփոխություն պայմանագրի նախագծում վրիպակի/պայմանագրի համարի/ վերացման նպատակով:

ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը այսուհետ՝ նաև մասնակից.

	Անվանումը	Հասցեն	Հեռախոսը	Էլեկտրոնային փոստ
1	Էներգո գրուպ ՍՊԸ	Ք. Երևան, Գրիբոյեդովի 15ա	+374 55 04 05 03	info@energogroup.am, energo.armenia@gmail.com

- Մասնակիցի կողմից ներկայացրած հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում հայտի ապահովման բանկային փոխանցումը.

Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը թերի էր, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն 41-րդ կետի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է գնահատող հանձնաժողովի նիստը, հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին ՝ մանրամասն նկարագրելով հայտնաբերված անհամապատասխանությունը առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը

- Մասնիկիցը մեկ աշխատանային օրվա ընթացքում շտկել է անհամապատսախանությունը և գնահատող հանձնաժողոը շարունակել է նիստը:
- Շտկումից հետո մասնակիցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը և մասնակցի զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում:

Չափաբաժնի համար	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը	Մասնակցի		Մասնակցի առաջարկած գները		
		Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	49860000	1	Էներգո գրուպ ՍՊԸ	41550000	20 %	49860000

Մրցույթի մասնակցի վերաբերյալ ուսումնասիրությունից պարզվեց, որ մասնակիցը 21.08.2025թ-ի դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներիցուցակում և 22.08.2025թ.-ի դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց վերաբերյալ ցուցակում:

Որոշվեց

1. Դ. Մադոյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Էներգո գրուպ ՍՊԸ-ի հայտը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնահատել բավարար:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. Ընտրված մասնակցի մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2 մասի 1-ին ենթակետի հայտերի գնահատումը կատարվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով:

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/38 գնման ընթացակարգի բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցին 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած ընտերված մասնակից հայտարարել Էներգո գրուպ ՍՊԸ-ին:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անգործության ժամկետ չի սահմանվում:
3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակիցին:

3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

Հնաձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը ներկայացրած պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

Որոշվեց:

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝	4
Դեմ՝	0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Մադոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Բուդումյան _____

Ա. Փիլոյան _____

Ա. Զաքարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Պետրոսյան _____